«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	-	«Հեքիաթի դասավանդման կարևորությունը կրտսեր դպրոցում»
ԱՌԱՐԿԱ	-	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	-	Լիզա Մաթևոսյան /20/
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	-	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն……...1
Հեքիաթի դասավանդման և ուսումնասիրման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում……...2
Հեքիաթի կրթադաստիարակչական նշանակությունն անձի ձևավորման գործում …16
Եզրակացություն……...19
Օգտագործված գրականություն……20

Ներածություն

Հեքիաթը գեղեցիկ հյուսվածք է՝ գունագեղությամբ ու գեղարվեստական հնարքներով առանձնացող և ժողովրդական կենդանի լեզվով համեմված մի գոհար:

Ինչպես ասել է Հովհաննես Թումանյանը. «Ամենամեծ ստեղծագործողը ժողովուրդն է, ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը»:

Երեխաների հետ աշխատանքում չափազանց կարևոր է գտնել նրանց հետ խոսելու ճիշտ լեզուն: Կարծում եմ՝ հեքիաթներն այդ հաղորդակցման ժամանակ ամենաարդյունավետ միջոցներից են: Ինչո՞ւ հենց հեքիաթի միջոցով, որովհետև ինչպես գիտենք բոլոր երեխաները, առանց բացառության, սիրում են հեքիաթներ կարդալ և լսել, դիտել ֆիլմեր և մուլտֆիլմեր՝ հեքիաթների սյուժեի հիման վրա նկարահանված և սիրով վերարտադրում են իրենց տեսածը և լսածը: Հեքիաթի լեզուն հասկանալի է երեխաներին: Ուստի, հետազոտական աշխատանքի ընթացքում կներկայացնեմ հեքիաթի կարևորությունը, անգնահատելի դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականների ուսուցման՝ ստեղծագործական կարողությունների, լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացման, ինչպես նաև համակողմանի դաստիարակության գործում:

Ըստ այդմ «Հեքիաթի դասավանդման կարևորությունը տարրական դասարաններում» թեմայով իմ կողմից կատարված հետազոտական աշխատանքի նպատակներն են հեքիաթի դասավանդման շնորհիվ.

- ընթերցանության տեքստի, բովանդակության ընկալմամբ՝ ձևավորել կարդացածը հասկանալու կարողություն,
- զարգացնել սովորողների մտածողությունն ու երևակայությունը,
- ձևավորել հերոսների արարքների և նրանց վարքագծի գնահատման կարողություններ,
- նորածանոթ բառերով հարստացնել բառապաշարը և զարգացնել խոսք կառուցելու կարողությունները,
- իրականացնել երեխաների համակողմանի՝ ֆիզիկական, իմացական, հուզական և սոցիալական ոլորտների հավասարաչափ զարգացում,

Նպատակների իրագործումը բխում է հետևյան կարևոր խնդիրներից.

- ուսումնասիրել հեքիաթի դասավանդման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում,
- բացահայտել հեքիաթների ունեցած դերը, նշանակությունը, կարևորությունը տարրական դասարաններում և դրանց կրթադաստիարակչական ազդեցությունը անձի ձևավորման գործում:

Հեքիաթի դասավանդման և ուսումնասիրման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում

Հեքիաթը բանահյուսության ժանր է, գերազանցապես արձակ, բանավոր պատմվածք՝ կախարդական, արկածային, կենցաղային բովանդակությամբ, հյուսված գեղարվեստական հնարքի յուրահատուկ միջոցներով:

Հեքիաթը մանկությունը հարստացնող հրաշալիքներից է: Հենց հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը աշխարհի և մարդկանց փոխհարաբերությունների հետ: Այն «այցելում է» մանկության ամենավաղ շրջանում և իր իմաստուն խորհուրդներով ու կենսունակությամբ ուղեկցում է մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Բոլոր երեխաները սիրում են հեքիաթներ լսել ու կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, մատչելի գաղափարն ու ենթատեքստը, հաճելի ավարտը հեշտացնում են նրա ընթերցումը ու դարձնում ցանկալի: Այդ պատճառով էլ թե՛ մեծերը և թե՛ փոքրերը միևնույն հեքիաթը կարդում են բազմիցս՝ ամեն անգամ նրանում հայտնաբերելով նորը, ուսանելին, հետաքրքիրն ու գրավիչը: Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոցն է:

Հեքիաթները ստեղծվել են մարդկության մանկության շրջանում, երբ գիտության անբավարար զարգացվածության աստիճանը մարդուն չի տվել այլ ճանապարհով իր իղձերն ու երազանքներն իրականություն դարձնելու հնարավորություն, և նա իր երազանքներին երևակայական լուծում է տվել: Չկարողանալով իրականության մեջ ոչնչացնել չատ ուժերը՝ ժողովուրդը դարեր շարունակ դրանց դեմ պայքարել է երևակայությամբ և բարի ուժերի օգնությամբ: Ժողովրդական այդ բազում ցանկություններից էլ ծնվել է հեքիաթների կախարդական աշխարհը: Հեքիաթներն իրենց երևակայական աշխարհով, հրապուրիչ արկածներով, կախարդում են մարդուն և նրան ներքաշում իրենց խորհրդավոր մթնոլորտի մեթ: Մարդիկ ասես վերանում են իրական աշխարհից և երկար ժամանակ մնում հեքիաթային իրադարձությունների տպավորության տակ: Հեքիաթներում ամփոփված են մարդկության կուտակած դարավոր փորձն ու իմաստությունը:

Երեխաներին պետք է բացատրել, որ աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց հեքիաթները: Դրանք տարբերվում են թե՛ բովանդակությամբ, թե՛ յուրահատուկ բազմազանությամբ: Սակայն բոլոր ժողովուրդների հեթիաթներին բնորոշ են ընդհանրությունները՝ ժողովրդի ազատության ձգտումը, պայքարն

արդարության, անկախության ու երջանկության համար, սեփական ուժի անպարտելիության հավատը:

Հեքիաթները բնութագրելուց հետո պետք է նշել, որ դրանք ունեն բնորոշ սկիզբ «Լինում է, չի լինում», «Ժուկով ժամանակով», ինչպես նաև վերջաբան՝ «Երկնքից երեք խնձոր է ընկնում», «Չարն այտեղ, բարին այստեղ» և այլն: Հեքիաթի սյուժեն զարգանում է չար ու բարի, դրական ու բացասական հերոսների պայքարով:

Աշակերտը պետք է ըմբռնի, որ հեքիաթային հերոսները ենթարկվում են փորձությունների ու դժվարությունների, բայց երբեք չեն ընկճվում: Նրանք պատրաստ են իրենց կյանքը նվիրաբերել ժողովրդին, նրա ազատությանն ու բարօրությանը:

Անհրաժեշտ է երեխաներին բացատրել,որ հայկական հեքիաթները տարբերվում են ուրիշ ժողովուրդների հեքիաթներից՝ իրենց լեզվով, բնության, միջավայրի և կենցաղի նկարագրություններով, հերոսների ազգային խառնվածքով:

Բոլոր ժամանակներում գրողներն օգտվել են հեքիաթների անսպառ գանձարանից: Հեքիաթի ժանրի զարգացման ասպարեզում մեծ ծառայություն են մատուցել Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը, Աթ. Խնկոյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը և ուրիշներ:

Հեքիաթները բաժանվում են երեք մեծ խմբի՝ հրաշապատում կամ կախարդական, իրապատում և կենդանական հեքիաթներ:

Հրաշապատում կամ կախարդական հեքիաթնորում ներկայացվում են Ժողովրդի երազանքները, հավատը երջանիկ կյանքի, բարու, արդարության, ճշմարտության, հաղթանակի հանդեպ: Հրաշապատում հեքիաթներում պատկերվում են բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի՝ դևերի, կախարդների, վհուկների, վիշապների դեմ: Ապահով ու երջանիկ կյանքի հասնելու մարդկային ձգտումը հրաշապատում հեքրաթների մեջ սերտորեն շաղկապված են մարդու կողմից բնության գաղտնիքներն ըմբռնելու, նրա ուժերին տիրապետելու և դրանք իր կենսական շահերին ծառայեցնելու անհրաժեշտության գիտակցության հետ:

Հեքիաթային հռչակավոր թռչող գորգը, որի միջոցով հերոսը կամ հերոսուհին մի ակնթարթում կտրում, անցնում է հսկայական տարածություն, կախարդական կոշիկները, որոնց օգնությամբ ազատվում են թշնամական հետապնդումներից և շատ ու շատ կախարդական առարկաներ, հին մարդկանց վերոհիշյալ գիտակցության ցայտուն արտահայտություններն են:

Երեխաների մասնակցությամբ կարելի է թվարկել հաճախ հանդիպող կախարդական իրերի այն անվանումները, որոնք դժվարին պահերին օգնում են հերոսներին և կարևոր նախապայման դառնում նվիրական երազանքների իրականացման համար (անմահական խնձոր, գավազան, կախարդական ծառ,

բացվող սփռոց, թռչող գորգ, անմահական ջուր): Այս հեքիաթներում բարի և չար ուժերի պայքարը ավարտվում է բարու հաղթանակով:

Իրապատում հեքիաթնորում նկարագրվում է մարդկանց կյանքը, նրանց կենցաղի լավ ու վատ կողմերը, մարդկային վեհ ձգտումները, ծաղրի են ենթարկվում մարդկանց զանազան արարքներ՝ ագահություն, չարություն, մեծամտություն տգիտություն: Այսպիսի հեքիաթներից են Հովի. Թումանյանի «Տերն ու ծառան», «Սուտասանը», «Խելոքն ու հիմարը», Ղ. Աղայանի «Անահիտը»:

Կենդանական հեքիաթնորում հանդես են գալիս կենդանիները, որորնց վերագրվում են մարդկային բնավորության բազմազան գծեր: Նրանց միջոցով այլաբանորոն ներկայացվում են մի կողմից չարությունը, նախանձը, ագահությունը, ժլատությունը, մեծամտությունը, մյուս կողմից՝ բարությունը, ազնվությունը, վեհանձնությունը, արդարամտությունը, ազնվությունը, հավատարմությունը, իմաստությունը: Այսպիսի հեքիաթներից են Հովի. Թումանյանի «Ծիտը», «Պոչատ աղվեսը», «Ճամփորդները» և այլն:

Հեքիաթի ուսումնասիրման առանձնահատկությունները

Հեքիաթի ուսումնասիրումն իրականացվում է բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչներով՝

- Զրույց
- Բնագրի ընթերցում
- Բառային աշխատանք
- Պատմում
- Ամփոփում

Բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչներով հեքիաթն ուսումնասիրելուց հետո պետք է անցնել նրա բովանդակության երևակայական կողմի բացահայտմանը: Այստեղ շատ կարևոր է, որ այն չպետք է շատ բացահայտ ու «կոպիտ» կերպով կատարել, քանի որ այդ դեպքում հեքիաթը կդադարի նպաստել երեխաների վառ երևակայության զարգացմանը: Երեխաները սիրում են հեքիաթները և՛ ունկնդրել, և՛ կարդալ: Շատ կարևոր է, որ թույլ տանք երեխաներն իրենք որոշեն, թե իրենց կարդացած կամ ունկնդրած հեքիաթում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում (Կարմիր Գլխարկը կարող էր տատիկին կարկանդակ տանել, ճանապարհին հանդիպել գայլին), որոնք անիրական են, երևակայական (Կարմիր Գլխարկը չէր կարող գայլի հետ հաղորդակցվել, որսորդները չէին կարող գայլի փորից ողջ և առողջ հանել Կարմիր Գլխարկին և տատիկին):

Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների ընթացքում պետք է կարևորել հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են իրադարձությունները՝ որոշվում գլխավոր հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր միտքը:

Օրինակ «Պոչատ աղվեսը» հեքիաթի ուսուցման ժամանակ դասարանը խանդավառվում է խորամանկ աղվեսի գործողություններով: Վերջինս ամեն ջանք բանեցնում է, աղաչանք-պաղատանք անում՝ անելանելի վիճակից դուրս պրծնելու համար, չէ՞ որ նրա համար մահացու վիրավորանք է «պոչատ» մականունը: Այդ պատճառով էլ նա գլխիկոր կատարում է բոլորի հանձնարարությունները: Զրույցի ընթացքում ուսուցիչը պետք է նշի՝ կարևոր է, որ յուրաքանչյուրն ապրի արդար վաստակով: Հեքիաթի սկզբում հանդես եկող պառավի միակ ապրուստի միջոցը այծի կաթն է, որը մեծ ախորժակով վայելում է աղվեսը: Այստեղից էլ սկսվում է նրա ձախորդության շարանը. նախ պառավի ձեռքով զրկվում է իր թավամազ պոչից, իսկ հետո բազմաթիվ խոչնդոտներ հաղթահարում՝ մինչև իր նախնական տեսքը ստանալը:

Հեքիաթներ կարդալիս անչափ կարևոր է ինտոնացիան, քանի որ սխալ ինտոնացիան «քանդում է հեքիաթային աշպարհի պատրանքը»՝ այն դարձնելով անհետաքրքիր, անգույն: Ուստի ուսուցիչը պետք է օժտված լինի նաև արտասանական շնորհներով, ունենա գեղացիկ, ազդեցիկ ձայն, ուշադրություն դարձնի շեշտադրությունը և դադարառությանը: Ձայնի ելևէջմամբ, հնչերանգով, զգացմունքայնությամբ հաջողությունն ավել ակնհայտ է դառնում: Ուսուցիչը նյութը պետք է մատուցի հետաքրքիր և մատչելի եղանակով, դասը վարի այնպես, որ մասնակցի ամբողջ դասարանը: Նմանակմամբ կարելի է ներկայացնել աղվեսին հանդիպող բոլոր հերոսներին՝ մեկնաբանելով նրանց վարքագիծը: Հարկավոր է ավելացնել, որ միմյանց հաջորդող հանդիպումները մեկ նպատակ են հետապնդում. բարի գործը միշտ էլ արժանանում է լավ վերաբերմունքի՝ աղվեսը գոհացնելով հերոսներից յուրաքանչյուրին ստանում է իր ուզածը: Մի ամսան կաթը շատ ծանր է նստում աղվեսի վրա: Երեխան ակամայից հավատում է, որ աղվեսը խելքի է եկել և այլևս նման արարք թույլ չի տա:

Կարելի է կատարել դերաբաժանում և հեքիաթն ընթերցել դերերով, քանի որ դերերով կարդալը միշտ հաճույք է պատճառում երեխաներին: Սակայն դերերով կարդալուց առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն. հերոսների բնավորության առանձնահատկությունների քննարկում, նրանց՝ կոնկրետ դեպքերում դրսևորած վարքի դիտարկում, ընտրովի ընթերցանություն: Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը, ինչն առավել նպաստում է հեքիաթի բառապաշարի, երկխոսությունների, իրադարձությունների ճիշտ հաջորդականության յուրացմանը: Ցանկալի է, որ հեքիաթի բեմականացման

ժամանակ երեխաներն ընտրեն երաժշտական նվագակցությունը, բաշխեն դերերը: Հեքիաթները ներկայացնելիս կարելի է պատրաստել տիկնիկային թատրոնի զարդեր՝ խաղալիքների ներգրավմամբ ստեղծելով հեքիաթային տեսարաններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները սիրում են ունկնդրել հեքիաթներ՝ ուսուցիչը պետք է դասի ժամանակ նաև հեքիաթներ պատմի:

Ուսուցչի վառ ու տպավորիչ խոսքը կնպաստի, որ երեխաները ոչ միայն ստանան հեքիաթ պատմելու արտահայտչականության նմուշ, այլև զգան հեքիաթի լեզվի և ոճի հմայքը: Այս իմաստով շահեկան է նաև դերասանների կատարմամբ ներկայացվող հեքիաթների ունկնդրումը, որն աչքի է ընկնում իր զգացմունքայնությանմբ, խոսքի հստակությամբ, պատմողի դիմախաղերի պայծառությամբ: Պատմողի հեքիաթային ոճը, դիմախաղերը, ձայնը օգնում են, որ երեխաների տպավորություններն ավելի պայծառ ու կենդանի լինեն:

Շատ կարևոր է, որ հեքիաթը վերապատմելիս երեխաները հարազատ մնան նրա լեզվին ու ոճին, օգտագործեն հերոսների խոսքերը, արտահայտությունները: Չէ՞ որ հեքիաթի խոսքը պարզ է, ուստի վերապատմումը պետք է մոտ լինի տեքստին՝ պահպանելով հեքիաթի խոսքի առանձնահատկությունները: Երեխաները պետք է հաճախ պատմեն հենց այն բարբառով, որով շարադրված է հեքիաթը, օգտագործեն հերոսների խոսքերը, արտահայտությունները, ժողովրդի բառն ու բանը: Անշուշտ, այդ դեպքում պետք է բացատրվեն անծանոթ բառերը կամ երեխաներն իրենք պետք է ասեն հեքիաթում օգտագործված բառերի և արտահայտությունների գրական համարժեքները: Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի կամ աշակերտների «կազմած» նկարներով պլանը: Սա պատմելու ուսուցման առաջին փուլն է: Հեքիաթի վերապատմումը կարելի է իրականացնել շարունակելով, ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով և այլ եղանակներով: Պետք է հանձնարարել երեխաներին անգիր սովորել այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում և պատմելիս անգիր արտասանել դրանք:

Այսպիսով՝ կարող ենք առանձնացնել, որ հեքիաթի՝ որպես գրական ստեղծագործության ուսումնասիրման գործընթացն ունի մի քանի առանձնահատկություն:

1. Հեքիաթն ուսումնասիրելիս անհրաժեշտ է երեխաներին օգնել՝ թափանցելու նրա հուզական գունապնակի մեջ՝ կարևորելով ստեղծագործության զգացմունքային ազդեցությունը:

Ընթերցված ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի՝ ինքնաճանաչման, ինքնարտահայտման, ինքնագնահատման ոլորտներին, այնպես էլ մեծ և փոքր խմբերով ուսումնական-ստեղծագործական

գործունեության ձևին: Փորձը ցույց է տալիս, որ ոչինչ երեխաներին այնպես չի համախմբում, որքան մեկ նպատակի շուրջ զգացմունքային ապրումներով միավորվելը: Այս նպատակով պետք է դասարանում ստեղծվի այնպիսի հոգեբանական մթնոլորտ և զգացմունքային տրամադրվածություն, որ երեխաները ոչ միայն անհամբեր սպասեն նյութի ընթերցամը, այլ նաև ակտիվորեն մասնակցեն նյութի շուրջ իրականացվող քննարկմանը: Այսպիսի մթնոլորտ ապահովվում է նյութի ընթերցումից առաջ ուսուցչի վարած նախապարրաստական զրույցի միջոցով:

2. Գեղարվեստական ստեղծագործության գործող անձանց էության օգտագործումը՝ աշակերտների վրա նյութի ունեցած ներգործությունն ուժեղացնելու նպատակադրումով: Օրինակ՝ նյութը ներկայացնել երաժշտության հնչյունների տակ, արվեստի վարպետների կատարմամբ և այլն:

3. Ցանկացած ստեղծագործության հիմնական մտքի ըմբռնման գործընթացի արդյունավոտությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի արտահայտիչ ընթերցմամբ:

4. Ընթերցված ստեղծագործության շուրջ տարվող լեզվաոճական աշխատանքը ճիշտ է սկսել իրականացնել նախապատրաստական զրույցի ժամանակ՝ այն շարունակելով մինչև բացատրական ընթերցանության մեթոդի վերջի՝ ամփոփիչ բաղադրիչն իրականացնելը:

5. Կարևորել գեղարվեստական ստեղծագործությունների ճանաչողական արժեքը՝ կրտսեր դպրոցականների մտահորիզոնի զարգացման, հետաքրքրությունների բավարարման, աշխարհայացքի ձևավորման գործում:

6. Գիտակցել գեղարվեստական գրականության դերը անձի զարգացման, նրա արժեքային համակարգի ձևավորման գործում: Հեքիաթի հերոսների արարքների, դատողությունների, ձգտումների, արժեքների ճիշտ վերլուծությունը կրտսեր դպրոցականների մեջ որոշակի բարոյական արժեքների ձևավորման, տրամաբանական հետևությունների հանգեցնելու անփոխարինելի միջոց են:

7. Տարբեր ստեղծագործությունների ունկնդրումը, ընթերցումը և դրանց շուրջ դասի ժամանակ տարվող աշխատանքը հնարավորություն են ստեղծում նաև գրականագիտական տարրական գիտելիքների ձեռք բերման համար, որոնք երեխաներին հատկապես պետք են գալու ուսուցման հետագա փուլերում: Քանի որ դեռևս նախադպրոցական տարիքից երեխաները տարբերում են բանաստեղծությունը հեքիաթից, պատմվածքը՝ բանաստեղծությունից, գիտեն բազմաթիվ հանելուկներ, շուտասելուկներ, ուստի աշակերտներին այս փուլում կարելի է դրանց մասին տալ պարզ բացատրություններ՝ հենց կարդալու ժամանակ գործնականորեն համեմատելով ստեղծագործություններն իրար հետ:

Օրինակ՝ աշակերտների ուշադրությունը բավական է հրավիրել հեքիաթների առաջին տողերի վրա և նրանք անմիջապես կզգան հեքիաթի լիզվի

առանձնահատկությունը. հեքիաթներն սկսվում են գրավիչ արտահայտություններով՝ «Լինում է, չի լինում», «Կար-չկար», «Եղել է չի եղել» և այլն: Աշակերտները մի քանի հեքիաթի օրինակով ընկալում են այդ լեզվաոճական կառուցվածքային առանձնահատկությունները, ոչ միայն տարբերում են, այլև ինքնուրույն հորինում են հեքիաթներ:

Հեքիաթի ուսումնասիրման մեթոդական շղթան.

- նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ,
- հեքիաթի ամբողջական ընթերցում,
- հեքիաթի ընթերցում մտքում (աշակերտների կողմից),
- բարձրաձայն ընթերցանություն (կարդում են աշակերտները)՝ մեկնաբանություններով,
- բառային աշխատանք,
- բնագրի ընթերցում՝ արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորման նպատակով,
- աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,
- պատմելու նաղապատրաստում, պատմում,
- ամփոփում:

Ըստ հետևյալ դասի պլանի II դասարանում «Մայրենի» առարկայից անցկացրել եմ «Երկնքից երեք խնձոր ընկավ» թեմայի ամփոփման դաս:

Դասի նպատակը	**Կարևոր դրույթները**	**Անհրաժեշտ նյութերը, պարագաներ**
Դասի ավարտին աշակերտները կկարողանան տարբերակել հեքիաթի տեսակները	Բանալի հասկացությունները, անվանումներ, որոնք աշակերտը պետք է սովորի	Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար՝ դիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար:

Կկարողանան թվարկել հեքիաթի՝ որպես գրական ժանրի առանձնահատկությունները: Կկարողանան մեկնաբանել առածները:	• Հեքիաթների բնորոշ սկիզբն ու ավարտը. «Լինում է չի լինում», «Կար, չկար», «Երկնքից երեք խնձոր ընկավ»: • Հրաշք, կախարդական, իմաստուն, հնարամիտ, դև, պոչատ աղվես, խոսող ձուկ • Տարբեր առածներ «Ծատի հետևից ընկնողը քիչն էլ կկորցնի» «Ծան բնի կողքին աղվես չի ապրի» «Աղվեսն իր պոչն է վկա բերում»:	**Դասի սկիզբ** **Նոր նյութի ներկայացում** **Ուղղորդված աշխատանք** **Ինքնուրույն աշխատանք** **Դասի ավարտ**
Դասարանի, դասի նախապատրաստում Ի՞նչ պետք է լինի դասարանում, սեղանին, երբ աշակերտները մտնում են դասարան		
Դիդակտիկ նյութեր, պաստառ, գրենական պիտույքներ:		
Գնատահում Նկարագրեք՝ ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք)		
Աշակերտների կողմից կատարված աշխատանքների հիման վրա ակնհայտ կլինի արդյո՞ք ունեցանք առաջընթաց և կարողացանք հասնել ցանկալի արդյունքի: • Այս կամ այն հեքիաթի համար ընտրել նոր վերնագիր: • Համառոտ ներկայացնել հեքիաթը՝ նշելով հեքիաթի գլխավոր միտքը: • Մեկնաբանել առածները: • Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ:		

Դասի սկիզբ		
Ուղղորդումներ պլանավորելու համար և ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ	**Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր**	**Աշակերտների գործողությունների նկարագրություն**
Ուղղորդումներ պլանավորելու համար Վարքային և այլ սպասելիքների ներկայացում	Ներկայացնել դասի թեման՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ» թեմայի ամփոփում:	• Կներկայացնեն ժողովրդական բանահյուսության իրենց հայտնի տեսակները և

Ի՞նչ են սովորելու աշակերտները (դասի թեման և նպատակը) Կարևոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչու՞ է դա կարևոր: Ի՞նչ են պատրաստվում անել դասին: Խթանիչ վարժություն (եթե կա) **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3)Ապահովել այլընտրանքներ լսողական և տեսողական տեղեկատվության համար -(3.1)Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ -(3.3)Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -(7.1)Բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը	Բանահյուսության տեսակներից առանձնացնել հեքիաթը և քարտային աշխատանքի միջոցով աշակերտների օգնությամբ վեր հանել հեքիաթին առնչվող բառերն ու հասկացությունները: Խթանել աշակերտների քննադատական մտածողությունը:	դրանք ոսկու փոխարեն կլցնեն կարասի մեջ: ● Կներկայացնեն հեքիաթի տեսակները, դրանց բնորոշ առանձնահատկությունները: ● Կներկայացնեն իրենց ծանոթ հեքիաթագիրներին: ● Համառոտ կպատմեն «Սուտասանը», «Պոչատ աղվեսը» և «Ինչպես է շունը մարդուն ընկեր դարձել» հեքիաթները: ● Կմեկնաբանեն դասանյութում տեղ գտած առածները: ● Կկատարեն խմբային աշխատանք:

- (8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների		

Նոր նյութի մատուցում		
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ	**Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր**	**Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ**
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ են սովորում աշակերտները: 2. Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: 3. Արդյո՞ք նոր նյութը հանգում է կարևոր դրույթներին և տանում դեպի դասի նպատակը: **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլ-ընտրանքներ լսողական և տեսողական տեղեկատվության համար (2.1)/(2.2) **Պարզեցնել բառա-պաշարն ու սիմվոլները**, շարահյուսությունն ու լեզվա-կան կառույցները -(2.3) Պարզեցնել մաթեմատի-կական արտահայտություններ, բանաձևերը -(2.5)Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով		

-(3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -(5.1) Կիրառել հաղորդակցության տարբեր/բազմաթիվ միջոցներ -(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին		

Ուղղղորդված աշխատանք		
Ուղղորդումներ պլանավորելու համար և ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ	**Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր**	**Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ**
Ուղղորդումներ պլանավորելու համար Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում, աշակերտներին օգնություն է տրվում:	• Հնարավորություն տալ աշակերտներին խմբով աշխատելու: • Ներգրավել դասարանի բոլոր աշակերտներին: • Կազմակերպել խմբային աշխատանք:	Հստակ տրված ժամանակում և ներկայացված պահանջնրով աշակերտները կաշխատեն խմբերով՝ կատարելով տրված առաջադրանքները: Աշխատանքները

Արդյո՞ք ներկայացված նոր նյութը պատրաստել է աշակերտներին աշխատելու Կան սպասելիքներ լսելու, մասնակցելու մյուսներին օգնելու: Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են: **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական և տեսողական տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(4.1) Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները -(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին -(6.3) Դյուրացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը	Դասարանը բաժանել 3 խմբի՝ յուրաքանչյուրում 4 աշակերտ: ● Նախապես ներկայացնել տրվելիք հանձնարարության պահանջը, նշել գնահատման չափանիշները, ժամանակի չափը, խմբային վարքականոնները: ● Անհրաժեշտության դեպքում օգնել, շտկել բացթողումներն ու թերացումները:	ժամանակից շուտ ավարտած խմբին կտրվի լրացուցիչ առաջադրանք, որն էլ իր հերթին խմբին միավոր կբերի:

-(8.3) Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը -(8.4) Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ		

Ինքնուրույն աշխատանք		
Ուղղորդումներ պլանավորելու համար և ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ	**Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր**	**Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ**
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու: 2. Ի՞նչ վարժություն, առաջադրանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական և տեսողական տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն	• Յուրաքանչյուր երեխայի հանձնարարել գրել բանահյուսության որևէ տեսակ և ներկայացնել այն: ● Կատարել շերտավորված ուսուցում՝ յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն տալով աշխատել իր հնարավորության սահմաններում: ● Հանձնարարել երեխաներին համառոտ ներկայացնել համապատասխան հեքիաթը, բնութագրել հերոսներին և գնահատել նրանց արարքները:	● Ինքնակպչուն թղթի վրա կգրեն և կներկայացնեն բանահյուսության տեսակներից որևէ մեկը՝ այն փակցնելով «Ժողովրդական բանահյուսություն» պաստառի վրա: ● Համառոտ ներկայացնել հեքիաթները, գտնել գլխավոր միտքը, շարունակել տրված առածը, դասավորել տրված բառերն ու ստանալ նախադասություն, կազմել բարդ բառեր:

հմտորեն կիրառելու գործունեությունը -(9.1) Խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով -(9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները		

Դասի ամփոփում		
Ուղղորդումներ պլանավորելու համար և ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ	**Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր**	**Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ**
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարևոր դրույթներին ու դասի նպատակներին 2. Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարևորության և հետագա կիրառելիության մասին 3. Ի՞նչ անդրադարձ է կատարվում աշակերտների վարքին և կատարողականին (գնահատում/խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ տրվում **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները,	• Հարցադրումներով անդրադարձ դասին • Կիրառել «Քառաբաժան» մեթոդը Ի՞նչ նոր բան սովորեցի Ի՞նչն ինձ զարմացրեց Ի՞նչն ինձ դուր եկավ, ինչու՞ Ի՞նչն ինձ դուր չեկավ, ինչու՞	• Հստակ պատասխաններով կամփոփեն թեմայի շուրջ ունեցած իրենց գիտելիքները: • Ոսկե ձկնիկից կխնդրեն կատարել իրենց ամենանվիրական ցանկությունները: • Հետևություններ կանեն դասի հետ կապված՝ դատապարտելով մարդկային բնավորության արատավոր կողմերը՝ ագահությունը, նախանձը, չարությունը, ժլատությունը,

դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(5.2) Օգտագործել ուսումնառության վերջնարդյունքի ձևավորման և ստեղծման բազմապիսի միջոցներ -(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը -(8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը -(9.3) Զարգացնել ինքնագընահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու	• Գնահատում, խրախուսանք՝ պարզաբանումներ ներկայացնելով • Տնային հանձնարարություն՝ հորինել մի հեքիաթ, որի հերոսները իրենց սիրած կենդանիներն են:	գովերգելով՝ աշխատասիրությունը, ազնվությունը, քաջությունը, բարությունը:

Հեքիաթի կրթադաստիարակչական նշանակությունն անձի ձևավորման գործում

Աշխարհի մեծ ու ճանաչված գրողները միշտ էլ ակնածանքով ու պատասխանատվությամբ են վերաբերվել մանկական գրականությանը: Նրանք իրենց կյանքի որոշակի շրջաններում անխուսափելիորեն մուտք են գործել այդ սուրբ տաճարը և իրենց հոգու անշեջ կրակից ու լույսից, գեղեցիկ զգացմունքներից հյուսել նաև հեքիաթներ՝ մանկական գողտրիկ ու անմահ գրական գոհարներ: Հեքիաթն օժտված է մանուկների հոգին կրթելու, անաղարտ պահելու և դժվարին պահերին նրանց զորավիգ դառնալու առաքելությամբ: Հեքիաթներ լսելով, երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ: Այն մանկան մեջ մշակում է գեղեցիկ զգացողություն, ճաշակ, հետաքրքրությունների ուղղվածություն, մասնագիտական կողմնորոշում, հղկում է բնավորությունը, հարստացնում նրա գիտելիքները, սերմանում շիտակություն, ազնվություն, հայրենասիրություն:

Հեքիաթներիում դատապարտվում են մարդկային բնավորության, փոխհարաբերությունների արատավոր կողմերը՝ ագահությունը, նախանձը, ժլատությունը, չարությունը և սուտը, գովերգվում են ազնվությունը, աշխատասիրությունը, քաջությունը, բարությունը և շատ ու շատ դրական հատկանիշներ:

Ինչպես գիտենք կրտսեր դպրոցականներն ուզում են հավատալ բազմապիսի հեքիաթներում տեղի ունեցող դեպքերին՝ կախարդական գավազանի գոյությանը, թռչող ձիերի, գորգի հզորությանը և նմանատիպ շատ ու շատ այլ հրաշքների: Նրանք հիանում են հեքիաթների բարի հերոսների հնարամտությամբ, հաղթանակներով, ձգտում են նմանվել նրանց՝ լինել բարի, ազնիվ, արդարամիտ, ներողամիտ: Երեխան իրեն պակերացնում է գլխավոր հերոսի փոխարեն, եթե տղա է, ապա քաջ, համարձակ, բարի, աշխատասեր, եթե աղջիկ է, ապա համեստ, բարի, գեղեցիկ:

Հեքիաթը հսկայական ազդեցություն է թողնում դպրոցականների անձի ձևավորման գործում: Հեքիաթներում ամփոփված են վարքի կանոնների պահպանմանը վերաբերող տեղեկատվություն, մարդկության կողմից դարերի ընթացքում մշակված բարոյական չափանիշներ:

Հեթիաթները երեխաների ուշադրությունն են հրավիրում հրաշքների, արտառոց նկարագրությունների նկատմամբ և ունեն հուզական մեծ ազդեցություն:

Հեքիաթի ուսուցման ընթացքում զարգանում է երեխայի մտածողությունը, ձևավորվում են հոգևոր ու բարոյական հայացքները: Այն հարուստ նյութ է ներկայացնում երեխաների բարոյական դաստիարակության համար: Հեքիաթների դերը երեխայի դաստիարակության գործում շատ մեծ է: Դրանց շնորհիվ երեխաները սովորում են հասկանալ հերոսների ներաշխարհը, վերապրել նրանց անցած ուղին, հավատում են բարու ուժին:

Հեքիաթն անբաժան է գեղեցկությունից և նպաստում է գեղագիտական դաստիարակության ձևավորմանը:

Հեքիաթներում իրար են բախվում չարն ու բարին, համարձակությունն ու վախկոտությունը, գթասրտությունն ու դաժանությունը: Դրանք երեխային հուշում են, որ կյանքը լի է հակասական երևույթներով, բազում դժվարություններով, բայց պետք չէ կորցնել հավատն ու լավատեսությունը, պետք է պայքարել սեփական երջանկության համար: Երեխաներն ավելի դյուրին ընկալում են հեքիաթը, քան մեծահասակների դաստիարակչական քարոզները: Սա է հեքիաթի ուժը, որի բացահայտումով էլ պայմանավորված է նրա բարոյադաստիարակչական կողմը: Այս խնդրի լուծումը ևս պետք է «բռնի», պարտադրող ոճով չկազմակերպվի: Այս դեպքում հեքիաթը կկորցնի իր ազդեցությունն ու համոզիչ տպավորությունը, եթե մենք աշակերտներին շինծու, կեղծ ճանապահով բերենք եզրակացության:

Ուսուցիչն իր կատարած աշխատանքի արդյունքում պետք է վստահ լինի՝ հասա՞վ արդյոք իր նպատակին, ծագե՞ց արդյոք երեխաների մեջ հեքիաթի հերոսների նկատմամբ սեր, փայլեցի՞ն արդյոք երեխաների աչքերը, հարստացա՞վ նրանց բարոյակամային, զգացմունքային աշխարհը: Այս դեպքում երեխաներն իրենք պարզ, անկեղծ, անմիջական դատողություններով կասեն, թե ինչ սովորեցին հեքիաթի հերոսներից, որն է էր հեքիաթից ստացած գլխավոր դասը:

Հեքիաթի դերը երեխայի զարգացման գործում բազմազան է՝ սկսած երևակայությունը զարգացնելուց, մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթների օգնությամբ երեխաները սկսում են վաղ խոսել և իրենց մտքերը ճիշտ ու գրագետ արտահայտել: Հեքիաթների երևակայական աշխարհը մղում է երեխաներին ստեղծագործելու և լայն հորիզոններ է բացում ստեղծագործական անհատականության ձևավորման համար:

Հեքիաթներն օգնում են երեխաներին իրենց մտքերը ճիշտ և սահուն արտահայտել՝ խոսքը դարձնելով ավելի զգացմունքային և պատկերավոր: Հեքիաթն օգնում է հարստացնել երեխայի բառապաշարը, խթանում է կապակցված խոսքը: Հեքիաթի շնորհիվ երեխայի խոսքը դառնում է ավելի զգայական ու գեղեցիկ: Այս կախարդական պատմությունները ձևավորում են հարցեր տալու ունակություն, բառակապակցություններ ու նախադասություններ կազմելու հմտություն:

Հեքիաթների շնորհիվ երեխաների մեջ ձևավորվում է նաև «ինքնօգնության մեխանիզմ», երբ երեխան հասկանում է, որ ստեղծված իրավիճակում այս կամ այն խնդրին պետք է լուծում տալ ինքնուրույն՝ գործի դնելով սեփական ուժերն ու հնարավորությունները և չսպասել երևէ մեկի օգնությանը: Այսպես ձևավորվում են արագ և ճիշտ կողմնորոշվելու, ինքնուրույն գործելու, որոշումներ կայացնելու կարողություններ:

Եզրակացություն

Այսպիսով՝ անասելի մեծ է հեքիաթի, որպես գրական ստեղծագործության, ունեցած դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցների կրթադաստիարակչական գործընթացում:

Հեքիաթներն ունեն դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր, համամարդկային սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են որպես քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների և խոսքի միջոցով՝ մեծացնելով երեխայի հոգու, նրա զգացմունքների վրա թողած ազդեցությունը:

Հեքիաթներն անսահման սեր են սերմանում իրենց երկրի և ժողովրդի հանդեպ՝ արժեվորելով նրանից ստացած գրական ժառանգությունը:

Երեխան հեքիաթից, տվյալ իրավիճալից, կյանքի յուրաքանչյուր իրադարձությունից վերցնում է այն, ինչը նրան հետաքրքրում է, ինչի կարիքը նա ունի:

Հեքիաթների շնորհիվ զարգանում է երեխայի բանավոր կապակցված խոսքը, հարստանում բառապաշարը, որն էլ հանգեցնում է նրա կողմից ճիշտ, էմոցիոնալ, պատկերավոր խոսք կազմելուն:

Երեխան հեքիաթի միջոցով, ծանոթանալով իրեն շրջապատող աշխարհի, մարդկանց, երթևույթների հետ, ձեռք է բերում ճանաչողական գիտելիքներ, զարգանում է մտածողությունը: Նա նաև ականատես է լինում չարի և բարու պայքարին, իր հոգում տոնում բարու հաղթանակը, տարբերում լավն ու վատը: Քայլ առ քայլ նա հղկվում է, ձևավորվում որպես անհատ:

Հեքիաթների լիարժեք ուսումնասիրումը մղում է երեխաներին հերոսներին նկարելու, տեսարանները նկարազարդելու, իր երևակայությամբ հեքիաթային նոր տեսարաններ ստեղծելու, իր նկարածը ներկայացնելու կարողության զարգացմանը:

Այսպիսով՝ հանգեցի այն եզրակացության, որ հեքիաթների դերը երեխաների համակողմանի զարգացման և առողջ հոգեկերտվածք ձևավորելու գործում անգնահատելի և անփոխարինելի է:

Հեքիաթը մարդկության անմահությունն է. հեքիաթի շնորհիվ սերնդեսերունդ փոխանցվող հոգևոր արժեքները կարող են շատ երկար ծառայել մարդկությանը: Եվ թող հեքիաթները դաստիարակեն մեր սաներին, թևավորեն նրանց մտքերը, թռիչք տան երազանքներին, օգնեն խուսափելու սխալներից և քայլել ազնիվ ու ճշմարիտ ճանապարհով:

Օգտագործված գրականություն

1. Ֆ. Գյուլամիրան «Հայոց Լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա» Երևան 2006թ.
2. «Նախաշավիղ» 1-2(29) 2005թ. գիտամեթոդական հանդես
3. «Նախաշավիղ» 3 2009թ. գիտամեթոդական հանդես
4. https://hy.m.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A5%D6%84%D5%AB%D5%A1%D5%A9#:~:text=%D4%B2%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC%20%D5%A3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%20%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A8,%D5%8D%D5%B8%D5%BE%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6
5. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D6%80%D5%A1%D5%B7%D5%A1%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4_%D5%B0%D5%A5%D6%84%D5%AB%D5%A1%D5%A9#:~:text=%D5%84%D5%A5%D5%AE%20%D5%A7%20%D5%A1%D5%BC%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF,%D5%A5%D5%B6%20%D5%B6%D6%80%D5%A1%D5%B6%D6%81%20%D5%B6%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6